

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ**

**ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

<p><b>1. Ընդհանուր դրույթներ</b></p> <p><b>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b> Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գեոդեզիայի և հողաշինարարության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 61-25.2.1-Ղ3-1):</p> <p><b>1.2. Ենթակա և հաշվետու է</b> Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Կոմիտեի ղեկավարին:</p> <p><b>1.3. Ենթական և հաշվետու պաշտոններ</b> Վարչության պետին ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:</p> <p><b>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:</p> <p><b>1.5. Աշխատավայրը</b> Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյաց 7</p>
<p><b>2. Պաշտոնի բնութագիր</b></p> <p><b>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <ul style="list-style-type: none"><li>• կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տարածքում համակարգի կողմից գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության բնագավառում իրականացվելիք աշխատանքների տարեկան և հետանկարային ծրագրերի մշակման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է ոլորտի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի (կարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների և այլն) մշակման ու ներդրման աշխատանքները.</li><li>• համակարգում է պետական գեոդեզիական՝ պլանային և բարձունքային, ազգային գեոդինամիկական ցանցերի ստեղծման, թարմացման և արդիականացման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է արբանյակային դիրքորոշման կայանների, էլեկտրոնային տախետմետրերի, գեոդեզիական ժամանակակից այլ սարքավորումների և տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի վերականգնման, սահմանազատման և սահմանագծման հետ կապված քարտեզագրական, գեոդեզիական և տեղագրական աշխատանքների աջակցությունը.</li><li>• համակարգում է քարտեզագրական՝ տեղագրական և թեմատիկ քարտեզների ստեղծման և արդիականացման աշխատանքների կազմակերպման գործընթացը.</li><li>• կազմակերպում է երկրի հեռահար գոնդավորման, օդալուսանկարահանման, տիեզերալուսանկարահանման արդյունքում ստացված նյութերի մշակման աշխատանքները.</li><li>• համակարգում է տարածական տվյալների ենթակառուցվածքի տվյալների թվայնացման, բազայի ստեղծման, մոդելավորման, ինտեգրման, համակարգման, հրատարակման և կառավարման հայեցակարգի և մեթոդաբանության մշակման ու ներդրման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման աշխատանքների կազմակերպումը.</li><li>• կազմակերպում է հերթապահ կադաստրային քարտեզների վարման աջակցությունը.</li><li>• կազմակերպում է հասցեների միասնական ռեգիստրի և տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է պետական մարմինների միջև երկրատարածական տվյալների</li></ul>

<p>փոխանակման գործընթացների աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"><li>• Ինտեգրված կադաստրի շրջանակներում համակարգում է տվյալների բազան, ապահովում անցումային փուլը և հետանկարային զարգացումը.</li><li>• կազմակերպում է հողերի օգտագործման (գոտիավորման) սխեմաների կազմման, սկզբունքների մշակման աշխատանքները, դրանց տեխնիկական (նախագծման) առաջադրանքի և ավարտված սխեմայի վերաբերյալ եզրակացության տրամադրման աշխատանքները.</li><li>• կազմակերպում է գոյություն ունեցող, նոր առաջացած և փոփոխման ենթարկված վարչական միավորների սահմանների ամրացման և դրանց նկարագրման աշխատանքները.</li></ul> <p><b>Իրավունքները՝</b></p> <ul style="list-style-type: none"><li>• գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության բնագավառում համակարգի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի (կարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների և այլն), ինչպես նաև տարեկան և հետանկարային ծրագրերի մշակման ու ներդրման համար, Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն.</li><li>• պահանջել երկրի հեռահար գոնդավորման, օդալուսանկարահանման, տիեզերալուսանկարահանման արդյունքում ստացված նյութերի մշակված տարբերակները.</li><li>• ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից պահանջել Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման (հողային հաշվեկշռի) վերաբերյալ հաշվետվություններ.</li><li>• աջակցել գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում իրականացվող աշխատանքների ավտոմատացված համակարգերի ներդրմանն ու արդիականացմանը.</li><li>• ուսումնասիրել Կոմիտեի կանոնադրական խնդիրների ոլորտներում համաշխարհային փորձը և ներկայացնել առաջարկություններ ՀՀ տարածքում դրանց կիրառման վերաբերյալ.</li><li>• ուսումնասիրել ՏՏԵ-ի վարման և երկրատարածական տվյալների ստանդարտացման միջազգային փորձը.</li><li>• պահանջել հաշվետվություններ սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին</li><li>• իրավիքել խորհրդակցություններ, կազմակերպելու քննարկումներ.</li></ul> <p><b>Պարտականությունները՝</b></p> <ul style="list-style-type: none"><li>• հետևել գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության բնագավառում համակարգի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի (կարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների և այլն), տարեկան և հետանկարային ծրագրերի մշակման աշխատանքներին.</li><li>• ընդունել տեղագրական և թեմատիկ քարտեզները.</li><li>• ընդունել ատլասների, քարտեզների, աշխարհագրական անվանումներին վերաբերվող տեղեկատուների, բառարանների ստեղծման աշխատանքները.</li><li>• Հայաստանի Հանրապետության պետական սահմանի վերականգնման, վարչատարածքային միավորների (մարզեր, համայնքներ) սահմանազատման, սահմանների նկարագրության և ամրացման, գեոդեզիական և տեղագրական աշխատանքների կատարման համար ցուցաբերել մասնագիտական և մեթոդական աջակցություն.</li><li>• ընդունել պետական գեոդեզիական պլանային և բարձունքային, գեոդինամիկական ցանցերի ստեղծման, թարմացման և արդիականացման աշխատանքները.</li><li>• ուսումնասիրել արբանյակային դիրքորոշման կայանների, էլեկտրոնային տախետմետրերի, գեոդեզիական ժամանակակից այլ սարքավորումների և տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման համար Կոմիտեին ներկայացված առաջարկությունները.</li><li>• վերահսկել ոլորտի ստեղծման, ներդրման և զարգացման աշխատանքներն իրականացնելու նպատակով ռազմավարական ծրագրերի մշակման աշխատանքները.</li><li>• վերահսկել հերթապահ կադաստրային քարտեզների վարման նպատակով մեթոդական ուղեցույցի մշակման աշխատանքները.</li><li>• վերահսկել քարտեզագրագեոդեզիական ֆոնդի ստեղծման աշխատանքները.</li><li>• ապահովել ոլորտների բնագավառում միջազգային կազմակերպությունների հետ</li></ul>
---

փոխհամագործակցությունը.

- ուսումնասիրել ոլորտի միջազգային փորձը և կիրառել ՀՀ տարածքում.

### 3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

#### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն
ՈԼՈՐՏ	Ճարտարապետություն և շինարարություն	Գիտությունների երկրի մասին
ԵՆԹԱՈԼՈՐՏ	Շենքերի և քաղաքային ճարտարագիտություն	
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		

#### 3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### 3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պետական կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարման կամ ճարտարագիտության բնագավառում երկրաբաշխի կամ քարտեզագրի կամ տեղանքագրի չորս տարվա աշխատանքային ստաժ.

#### 3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

##### Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում

##### 6. Բարեվարքություն

##### Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

### 4. Կազմակերպական շրջանակ

#### 4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

#### 4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

#### 4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն՝

#### 4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով

համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

#### 4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և զնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: